

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«\_\_\_» \_\_\_\_\_ 2021թ.

N --- -Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ**  
**ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ. Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրված 933.52քմ մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.04.2009թ. հ.2470805 վկայական/ տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) տարի ժամկետով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**  
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**  
**ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ. Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող /ոչ բնակելի տարածք/ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրված 933.52քմ մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.04.2009թ. հ.2470805 վկայական/ տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) տարի ժամկետով:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը սոցիալական, առողջապահական և իրավաբանական ծառայություններ է մատուցում շուրջ 8000 միայնակ տարեցների, հաշմանդամների, փախստականների և այլ անապահով խմբերի:

Քննարկվող տարածքում գործում է ցերեկային խնամքի կենտրոն տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Կենտրոնին կից գործում է նաև բարեգործական ճաշարան, որը հնարավորություն է տալիս լուծել կենտրոն հաճախող շահառուների սննդապահովման խնդիրը: Կազմակերպության կողմից վերջիններիս համար իրականացվում է նաև տնային խնամք:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է Հ.Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող 933.52քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել 3 (երեք) տարի ժամկետով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ  
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ  
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**